

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԻ ԵՎ ՍՓՅՈՒՌԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

1959 թ. Պատմության ինստիտուտի կազմում հիմնադրված «ԽՍՀՄ և ժողովրդական դեմոկրատիայի երկրների պատմության» բաժինը սոցիալիստական ճամբարի երկրների պատմության հետ մեկտեղ զբաղվելու էր նաև այդ երկրների հայ համայնքների պատմության ուսումնասիրությամբ: Բաժինը, որը հետագայում վերանվանվեց Հայ գաղթավայրերի և պատմական կապերի ուսումնասիրության բաժին, մինչև 1980 թ. ղեկավարեց պ.գ.թ. Վազգեն Ոսկանյանը, 1980–1988 թթ.՝ պ.գ.դ., ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը: Սկզբնական շրջանում բաժնի ուսումնասիրության հիմնական ոլորտը դարձան Նոր-Նախիջևանի, Ղրիմի, Աստրախանի, Գրիգորիոպոլի, Հյուսիսային Կովկասի, Միջին Ասիայի հայկական համայնքների պատմությունը: Պատմության ինստիտուտի աշխատակիցների՝ 1955 թ. Աստրախան եւ Կազան կատարած գիտարշավի արդյունքում Վ. Ոսկանյանն ու Վ. Գրիգորյանը արժեքավոր ուսումնասիրություններ հրատարակեցին ռուսահայ գաղութների պատմության վերաբերյալ: Վ. Ոսկանյանի նախաձեռնությամբ կազմակերպվեց Ուկրաինայի, գլխավորապես Լվովի գիտական կենտրոնների հետ համագործակցություն: Արևմտյան Ուկրաինայի և Լեհաստանի տարածքներում հարյուրամյակներ գոյատևած մի քանի տասնյակ մեծ ու փոքր հայկական գաղութների պատմության հետազոտումը դարձավ մի խումբ հայ և ուկրաինացի պատմաբանների ուսումնասիրության առարկա և արտացոլվեց նաև հայ-ուկրաինական գիտական չորս նստաշրջանների զեկուցումներում ու հաղորդումներում: Պատմաբանների համագործակցության արդյունքում հայ և ուկրաինացի ժողովուրդների պատմական կապերին և բարեկամությանը նվիրված համատեղ գիտաժողովներ կազմակերպվեցին Երևանում (1959, 1967, 1987), Կիևում եւ Լվովում (1962): Հայաստանի և Ուկրաինայի ԳԱ պատմության ինստիտուտների միացյալ գիտաժողովների նյութերն առանձին հատորներով հրատարակվել են հայերեն եւ ուկրաիներեն լեզուներով («Հայ և ուկրաինացի ժողովուրդների բարեկամությունն ու պատմական կապերը», ռուսերեն, Ե., 1961, Կիև, 1965, Ե., 1971): 1987 թ. Երևանում կազմակերպված գիտաժողովի առավել արժեքավոր զեկուցումներն ընդգրկվեցին 2012 թ. հրատարակված «Из истории армяно-украинских, венгерских и молдавских отношений» (Сб. статей и материалов. Составители: К. Хачатрян, О. Алексанян. Ред. К. Хачатрян) ժողովածուի մեջ:

Գաղութահայ պատմության ուսումնասիրման առաջին նախաձեռնողներից էր Ա. Աբրահամյանը, որի երկհատոր «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության» աշխատանքը (Ե., 1964 և 1967) կարևորվում է որպես հիմնահարցի հետազոտման առաջին փորձ: Նրա աշխատության շնորհիվ 1960-ական թվականներին հայ ընթերցողը հնարավորություն ստացավ ընդհանուր գծերով պատկերացում կազմել շուրջ երեք տասնյակ հայ գաղթօջախների մասին:

1960–1980-ական թվականներին ստեղծվեցին մենագրական և այլ բնույթի հետազոտական աշխատանքներ առանձին գաղթավայրերի և առաջին հերթին սլավոնական երկրների հայկական գաղութների պատմության վերաբերյալ, որոնք հայության կյանքում կատարել են առավել նշանակալից դեր: Գաղութահայ առանձին հատվածների պատմության լուսաբանման ուղղությամբ հրատարակված առաջին մենագրությունը Վ. Միքայելյանի «Ղրիմի հայկական գաղութի պատմություն» (Ե., 1964) աշխատությունն էր, որին հաջորդեցին հեղինակի մենագրությունները նույն գաղութի պատմության նոր շրջանի մասին, իսկ ավելի ուշ՝ գաղութի ամբողջական՝ շուրջ 70-ամյա պատմության հրատարակումը մեկ գրքով («Ղրիմահայոց պատմություն», (Ե., 1989, նաև՝ ռուսերեն): Նշված աշխատություններում գիտական շրջանառության մեջ են դրվել ձեռագրային և արխիվային հարուստ նյութեր, որոնց մի մասը քաղվել է օտար աղբյուրներից:

Այս բնագավառում ստեղծված հիմնարար ուսումնասիրությունը Վ. Բարխուդարյանի՝ Նոր Նախիջևանի հայոց գրեթե մեկ ու կես դարյա (1779–1917) պատմությանը նվիրված երկհատոր աշխատությունն է («Նոր Նախիջևանի հայ գաղութի պատմություն», Ե., 1967 և 1985): Գրված լինելով արխիվային տարատեսակ փաստաթղթերի ու նյութերի հիման վրա, սույն մենագրություններում արտացոլվել է Ռուսաստանում նոր շրջանի ամենախոշոր հայկական գաղութի սոցիալ-տնտեսական և հասարակական-մշակութային կյանքի ամբողջական պատմությունը: Աշխատությունը 1997 թ. մեկ հատորով հրատարակվեց ռուսերեն:

Աշխատանքներ են կատարվել նաև մոլդովահայության և ռումինահայության պատմության հարցերի մշակման և ներկայացման գործում: 1964 թ. լույս տեսավ Ա. Քոլանջյանի աշխատությունը՝ Տրանսիլվանիայի հայերի պատմության, իսկ 1969 թ.՝ Ժ. Անանյանի մենագրությունը Գրիգորիոպոլի հայկական գաղութ-քաղաքի մասին:

1978 թ. իրականացվել է «Հայերը Տրանսիլվանիայում 19-րդ դարի կեսերից մինչև 1917 թ.» թեման, որն ընդգրկել է Տրանսիլվանիայի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքը: Լուսաբանվեցին Տրանսիլվանիայի հայկական գաղութի հաստատման, հիմնական հայկական կենտրոնների՝ Գերլայի, Ելիզավետպոլի, Ջուրջովի և այլ քաղաքների սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության հարցերը: Հանգամանորեն լուսաբանված է «Արմենիա» (1877–1913) հունգարերեն լեզվով հայագիտական ամսագրի գործունեությունը հայ-հունգարական կապերի ամրապնդման գործում: Գիտական համագործակցության արդյունք է նաև «Հայ-հունգարական պատմական եւ մշակութային կապերի պատմությունից» (Ե., 1983) հոդվածների ժողովածուն: Այն կյանքի է կոչվել Հայաստանի և Հունգարիայի Գիտությունների ակադեմիաների միջև 1968 թ. կնքված համագործակցության պայմանագրի հիման վրա: Ժողովածուին աշխատակցել են երկու երկրների մասնագետներ՝ Է. Շյուլցը, Ա. Վյորոշը, Է. Նիդերհաուզերը, Ժ. Տրոչանին, Գ. Բոնան, Է. Քոլանջյանը, Ս. Մխիթարյանը, Գ. Պինգիրյանը, Լ. Ասմարյանը և այլք: Ժողովածուն հրատարակության պատրաստելու և խմբագրելու համար Վ. Բարխուդարյանը պարգևատրվել է Հունգարիայի Գիտությունների ակադեմիայի մեդալով:

1989 թ. Հայ գաղթօջախների պատմության բաժնի աշխատակիցների ուժերով հրատարակվեց «XVI–XVIII դդ. հայ ազատագրական շարժումները եւ հայ գաղթավայրերը» գիտական հոդվածների ժողովածուն, ուր անդրադարձ է կատարված Ռուսաստանում, Վրաստանում, Հյուսիսային Կովկասում, Մոլդովայում ու Վալախիայում, Պարսկաստանում, Հոլանդիայում, Հնդկաստանում հայ ազատագրական շարժումներին և հայերի մասնակցությանը տվյալ տարածաշրջաններում առաջադիմական գաղափարների տարածման գործընթացներին:

ՀԿԿ Կենտկոմի որոշմամբ 1980-ական թթ. սկզբներին Հայաստանի ԳԱ նախագահությանն առընթեր ստեղծվել էր Սփյուռքի բաժին, որը գործեց ավելի քան 15 տարի՝ պարբերաբար հրատարակելով ինֆորմացիոն բյուլետեններ: Բաժինն առանձնապես արդյունավետ գործունեություն չունեցավ, ուստի 1990-ական թթ. կեսերին փակվեց: Սփյուռքի պատմության ուսումնասիրությունը դրվեց Պատմության ինստիտուտի գաղթավայրերի պատմության բաժնի վրա, որն այդուհետ անվանվեց Հայ գաղթավայրերի և Սփյուռքի պատմության բաժին: 1988–2004 թթ. բաժինը ղեկավարեց ակադեմիկոս, պ.գ.դ. Վարդգես Միքայելյանը:

Ստեղծումից ի վեր բաժինը հանդիսացավ հայ գաղթավայրերի և Սփյուռքի պատմության հիմնահարցերով զբաղվող եզակի գիտական ստորաբաժանում հանրապետության գիտակրթական հաստատությունների կառուցվածքում: Շարունակելով նախկինից եկող լավագույն ավանդույթները, բաժինը հայկական գաղթօջախների և Սփյուռքի պատմության ուսումնասիրման բնագավառում հրատարակեց ուշագրավ աշխատություններ: Ռուսաստանի հայկական համայնքների պատմության ուսումնասիրմանն է նվիրված Ժ. Անանյանի և Վ. Խաչատրյանի՝ «Ռուսաստանի հայկական համայնքները» (Ե, 1993, ռուսերեն) աշխատությունը: Բաժնի գիտաշխատողների ջանքերով 1996 թ., Գյուլբենկյան հիմնադրամի հովանավորությամբ, հրատարակվեց «Էջեր հայ գաղթավայրերի պատմության» հոդվածների ժողովածուն՝ Վ. Բարխուդարյանի, Վ. Միքայելյանի, Վ. Խաչատրյանի, Զ. Գալստյանի, Վ. Մարտիրոսյանի, Է. Թաջիրյանի, Ռ. Եղիազարյանի և այլոց մասնակցությամբ (խմբ. Վ. Բարխուդարյան, Զ. Եկավյան):

«Համաափյուռքյան կազմակերպություններ» թեմատիկ խմբի ղեկավար Կ. Դավաթյանի կողմից 1998 թ. հրատարակվում է «Հայ Սփյուռքի պատմություն» ուշագրավ մենագրությունը: Աշխատանքում համառոտ շարադրված է ժամանակակից հայկական Սփյուռքի պատմությունը՝ սկզբնավորումից մինչև մեր օրերը: Ներկայացված է Սփյուռքի ժողովրդագրական պատկերը, կուսակցությունների և կազմակերպությունների գործունեությունը: Նույն թվականին հրատարակվեց «Հայ-ռուսական հարաբերությունների պատմության հարցեր» նյութերի ժողովածուն, որտեղ մանրամասն ներկայացվել են հայ-ռուսական դարավոր հարաբերությունների բազմաթիվ հիմնահարցեր: Է. Մելքոնյանը 1999 թ. հրատարակեց «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը Խորհրդային Հայաստանում. 1923–1937», իսկ 2005 թ.՝ «Հայ Բարեգործական Միության պատմություն» հիմնարար աշխատությունները: 2000 թ. լույս տեսավ բաժնի ավագ գիտաշխատող Բ. Ավագյանի՝ «ԱՄՆ-ի հայ գաղութի պատմությունը սկզբնավորումից մինչև 1924 թ.» ուշագրավ մենագրությունը:

2000 թ. սկսած բաժնի գիտաշխատողները ձեռնամուխ եղան «Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.)» եռահատոր աշխատության հրատարակությանը: Եռահատորյակի առաջին երկու հատորներն (խմբ. Վ. Միքայելյան) ընդգրկում են Սլավոնական աշխարհի և Հյուսիսային Կովկասի հայ գաղթօջախները (Ե., 2003) և Ասիայի ու Աֆրիկայի հայ գաղթօջախները (Ե., 2003): Աշխատության երրորդ հատորն (Ե., 2013) ընդգրկում է Եվրոպայի և Ամերիկայի հայ գաղթօջախների պատմությունը (խմբ. Վ. Բարխուդարյան): Հատկանշական է, որ հատորի աշխատանքներին ներգրավված են եղել նաև Մփյուռքի գիտնականները:

2004 թվականից մինչև 2016 թ. դեկտեմբեր բաժնի վարիչը կրկին Վ. Բարխուդարյանն էր, որին փոխարինեց պ.գ.դ., պրոֆեսոր Գևորգ Ստեփանյանը: Բաժնի ավագ գիտաշխատող Ա. Բախչինյանը 2005 թ. հրատարակեց «Հայաստան-Շվեդիա. պատմամշակութային առնչություններ» (անգլերեն), 2010 թ.՝ «Հայությունը սկանդինավյան երկրներում. հայ-սկանդինավյան պատմամշակութային առնչությունները սկզբից մինչև մեր օրերը» աշխատությունները, Վ. Բարխուդարյանը՝ «Համառոտ ուրվագիծ Ռուսական կայսրության հայկական դպրոցների պատմության» (Ե., 2006), «Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (XVIII դարի կես – XX դարի սկիզբ)» (Ե., 2010) աշխատությունները, Ա. Խառատյանը՝ «Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը XV–XVII դդ.» (Ե., 2007) մենագրությունը:

Բաքու քաղաքի և նահանգի պատմաժողովրդագրական հարցերի լուսաբանմանն է նվիրված Գ. Ստեփանյանի «Բաքվի նահանգի հայությունը 19-րդ դարի երկրորդ կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» (Ե., 2010), «Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» (Ե., 2011) աշխատությունները, որոնցում մատենագրական, վիմագիր աղբյուրների և տարաբնույթ սկզբնաղբյուրների համալիր ուսումնասիրությամբ հիմնավորվել է Ապշերոնյան թերակղզում և Բաքվում հայերի տեղաբնակ և մշակութակերտ լինելը: Խորհրդային հանրապետությունների հայկական համայնքների պատմությանն է նվիրված Հ. Ալեքսանյանի՝ «Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917–1941 թթ.» (Ե., 2011) աշխատությունը, որում ներկայացվում է 1917 թ. խորհրդային իշխանության տակ անցած նախկին ցարական Ռուսաստանի, ապա ԽՍՀՄ տարածքի հայկական համայնքների հասարակական-քաղաքական, հոգևոր, մշակութային, կրթական կյանքը, խորհրդային հանրապետություններում բնակվող հայության թվաքանակը, տեղաբաշխման շրջանները, լեզվին ու գրագիտությանը վերաբերող հիմնահարցերը: Լուսաբանվում են խորհրդային տարիներին հայկական հասարակական-քաղաքական շրջանակներին ու ազգային հաստատություններին հասցված կորուստները, ինքնությունն ու ազգային արմատները պահելու հայության փորձերը: Է. Թաջիրյանը հրատարակել է «Նոր Ջուղայի հայ գաղթօջախը 17–18-րդ դդ. եվրոպական աղբյուրներում» (Ա մաս, Ե., 2012), «Նոր Ջուղան եվրոպական աղբյուրներում 17–18 դարերում» (Բ մաս, Ե., 2017) աշխատությունները: Աշխատության առաջին մասում ներկայացված է 17–18-րդ դարերում Արևելք այցելած եվրոպացի ճանապարհորդների, վաճառականների, հոգևորականների և միսիոներների ծավալուն ուղեգրություններում, նկարագրություններում, նամակներում և զեկուցագրերում արտացոլված Նոր Ջուղայի

հայկական գաղթօջախին վերաբերվող նյութը: Երկրորդ մասում ներկայացվում է եվրոպական հեղինակների (Գարսիա դե Սիլվա Ֆիգեռոայի, Յ. Ֆիլիպի, Ադամ Օլեարիուսի, Գաբրիել Շինտնի, Դոլիե Դելանդի, Ֆրանսուա Պիկեի, Թեվրնոյի, Սանտոնի, Ֆիլիպ Ավրիլիի, Տուրնբֆորի, Ժակ Վիլլոտի, Ջեմելլի Կարերիի և այլոց) բնագրերի Նոր Զուղայի պատմությանն առնչվող հայերեն թարգմանությունները: Իրաքի հայ համայնքի պատմությանն է նվիրված Ս. Օհանյանի՝ «Իրաքի հայ համայնքը 20-րդ դարուն» (Ե., 2016) մենագրությունը: Ժամանակագրական առումով աշխատությունը ընդգրկում է իրաքահայության մեկդարյա պատմությունը: Աշխատությունում քննարկված են գաղթօջախին առնչվող բազմաթիվ հիմնահարցեր (եկեղեցական, հասարակական-քաղաքական, կրթամշակութային և այլն): Միրիայի հայ համայնքի պատմությանն է նվիրված Ա. Ֆիշենկճեանի՝ «Սուրիոյ Հայ համայնքի պատմութիւնը 1946–1970 թթ.» (Ե., 2018) մենագրությունը: Աշխատությունում փաստերի համադրմամբ ներկայացվում է Միրիայի հայ համայնքի ազդեցիկ դերակատարությունը երկրի հասարակական-քաղաքական, տնտեսական, կրթամշակութային կյանքում: Չինաստանի և Ճապոնիայի հայ համայնքների պատմությանն է նվիրված Ա. Բախչիյանի «Հայերը Չինաստանում: Հայ-չինական պատմամշակութային կապերը» (Ե., 2017), «Հայ-ճապոնական պատմական և մշակութային կապերը», (Ե., 2017) աշխատությունները: Դրանցում ներկայացվում է հայերի և չինացիների միջև եղած բազմադարյան կապերը, Չինաստանում հայության ներկայության պատմությունը: Հայաստանի և Ճապոնիայի միջև առկա հարաբերությունները՝ պատմության, մշակութային, գիտական և այլ բնագավառներում:

Բաժնի աշխատակիցները ակտիվորեն մասնակցել են Պատմության ինստիտուտի կողմից խորհրդային տարիներին հրատարակված «Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյակի, ինչպես նաև ներկայումս հրատարակվող «Հայոց պատմություն» բազմահատորյակի համապատասխան բաժինների հեղինակման աշխատանքներին:

Բաժինը 2017 թ. հրատարակեց «Վլադիմիր Բարխուդարյան-90» խորագրով ժողովածուն՝ նվիրված անվանի ու բազմավաստակ պատմաբան, գիտության վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Վ. Բարխուդարյանի հիշատակին: Նույն թվականին բաժնի աշխատակիցների ջանքերով կազմակերպվեցին «Վենետիկի միախարյան միաբանություն-300»՝ միջազգային և «Միրիահայերի հիմնահարցեր. պատմություն և արդիականություն»՝ հանրապետական գիտաժողովները:

Բաժնի գիտական աշխատանքներն իրականացնում են. բաժնի վարիչ՝ առաջատար գիտաշխատող, պ.գ.դ., պրոֆեսոր Գ. Ստեփանյան, առաջատար գիտաշխատող՝ պ.գ.թ. Բ. Ավագյան, ավագ գիտաշխատող՝ բ.գ.թ. Ա. Բախչիյան, գիտաշխատողներ՝ Է. Թաջիրյան, պ.գ.թ. Ա. Ֆիշենկճեան, պ.գ.թ. Ս. Օհանյան, պ.գ.թ. Վ. Ղարախանյան, պ.գ.թ. Վ. Սարգսյան, ավագ լաբորանտ՝ Գ. Շախկյան, ասպիրանտ՝ Վ. Եսայան: